ՊԱՏՄԱԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

10.56737/2953-7843-2023.10-94

ԱՍԱՏՈՒՐ ՍԱՐՅԱՆ
Բանասիրական գիտ. թեկնածու

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՏՐԱՊԻԶՈՆՑԻՆ ԵՒ ՆՐԱ ՈՒՂԵԳՐՈՒԹԻՒՆԸ ՍՐԲԱԼՈՅՍ ՄԻՒՌՈՆԻ ՀՐԱՇԱԳՈՐԾ ՁՕՐՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ[1]

ԺԸ. դարում է ապրել եւ գործունէութիւն ծաւալել Յովհաննէս Տրապիզոնցի վարդապետը՝ մեր եկեղեցու երեւելի դէմքերից մէկը։ Մայր Աթոռ Սբ. Էջմիածնի միաբան վարդապետի անունը քիչ բան կարող է ասել ներկայ ընթերցողին, թեպէտ Յովհաննէս եպիսկոպոսը իր ժամանակի բաւական ճանաչուած եւ հեղինակութիւն վայելող եկեղեցական գործիչներից էր։ Ժամանակակիցները նրան բնութագրում են «ծոցածին զաւակ Սրբոյ Աթոռոյս՝ Յովան[ն]էս խոհեմամիտ վարդապետ»[2], «ծայրագոյն նուիրակ սրբոյ Աթոռոյդ Էջմիածնի, խոհեմազարդ եւ համեղաբան Յոհաննէս վարդապետ»[3], «սիրազուն[4] Յոհաննէս նուիրակ»[5] անուանումներով։ Էջմիածնի նուիրակին հիմնականում ճանաչում եւ հռչակ է բերել նրանից մեզ աւանդուած միակ գրուածքը՝ «Թուղթը» (եթէ հաշուի առնելու չլինենք նոյնի մի կարճառօտ տարբերակը), որը բաւական լայն տարածում է ունեցել ուշ միջնադարեան Հայաստանում եւ տարաշխարհիկ միջավայրում։ Բաւական է ասել, որ այդ նամակը ԺԹ. եւ Ի. դարերի ընթացքում ունեցել է մեզ յայտնի թուով երեք բնագրային ամբողջական, մէկ հատուածական եւ մէկ թարգմանական հրատարակութիւն[6]։ Ընդ որում, այդ հրատարա-

---

[1] Ստացուել է՝ 24.08.2023, գրախօսուել է՝ 29.08.2023։ Էլ. հասցէ՝ asa-saryan@yandex.com։*

[2] ՄՄ, Ձեռ. թիւ 2912, ԺԹ., 40 ա, «Թուղթ առ Յովհան[ն]էս վարդապետն՝ նուիրակն Հնդստանու»։

[3] ՄՄ, Կաթողիկոսական դիւան, թղթ. հմր. 2, վաւ. 14։

[4] Բառը համապատասխան բառարաններում նկարագրուած չէ։ Հաւանաբար «սիրասուն» բառի մի տարբերակն է։

[5] ՄՄ, Կաթողիկոսական դիւան, թղթ. հմր. 2, վաւ. 14։

[6] «[Յովհաննէս վարդապետի արկածները]» (տե՛ս «Միջնադարեան հայկական ուղեգրութիւններ երկու գրքով. ԺԵ.–ԺԸ. դարերի ուղեգրութիւններ, գիրք Բ.», թարգմանութիւնը, առաջաբանը եւ ծանօթագրութիւնները Ա. Մադոյեանի, Երեւան, 2005, էջ 216–216–222)։

կութիւններն, ինչպէս ցոյց է տալիս պարզ համեմատութիւնը, արուած են նոյն գրուածքի ձեռագրային տարբեր ընդօրինակութիւններից: Սոյն նամակը հետագայ շարադրանքում մենք կանուանենք ուղեգրութիւն, քանի որ այն իր բովանդակային եւ ձեւային յատկանիշներով առաւելաբար տեղաւորւում է հայկական միջնադարեան ուղեգրութեան գրական տեսակի սահմանների մէջ: Յայտնի է, որ «ուղեգրութիւն» եզրոյթը ստեղծուել է նոր ժամանակներում, իսկ այդ տեսակին պատկանող գործերը մեզ հասել են ամենատարբեր անուանումներով, ինչպէս պատմութիւն, յիշատակարան, թուղթ եւ այլն: Քննութեան առարկայ գրուածքին՝ իբրեւ հայ միջնադարեան ուղեգրութեան դասական մի նմուշի, մենք ակնարկային կերպով անդրադարձել ենք՝ այն դիտարկելով ԺԸ. դարի ուղեգրութիւնների շարքում[7]:

Հիմք ընդունելով Յովհաննէս Տրապիզոնցու Ուղեգրութիւնը եւ դրա կարճ վերաշարադրանքը պարունակող նամակը, ինչպէս նաեւ համադրելով զանազան գրաւոր աղբիւրներում առկայ փաստերը, այստեղ կփորձենք, հնարաւորինս վերականգնել հեղինակի կենսագրութեանն առնչուող ինչ-ինչ դրուագներ:

Նամակը երկու անգամ Վենետիկի Մխիթարեան միաբանութեան մատենադարանի՝ ըստ ամենայնի երկու տարբեր ձեռագրերից հրատարակել է «Բազմավէպը»՝ 1857-ին («Ազգային ճանապարհորդ մը. Տէրմանուկեան Յովհաննէս եպիսկոպոս»[8]) եւ 1883-ին («Արկածք Յովհաննու վարդապետի»[9]): «Բազմավէպում» ընդունուած սովորոյթին համապատասխան՝ հրատարակիչները չեն նշում ձեռագրերի համարները[10]: Ընդամէնը բաւարարւում են՝ տեղեկացնելով, որ ձեռագրերը Վենետիկի միաբանութեան վանքի սեփականութիւնն են: 1857 թուականի հրատարակութեան ներածական խօսքում կարդում ենք. «Հնդկաստանէն էջմիածին դարձած ատենին (Յովհաննէս եպիսկոպոսը.– Ա. Ս.)՝ հոն իր թուղթը գտնելով կ'առնու դարձեալ ու քովը կը պահէ: Հիմա այս թուղթը մեր մատենադարանը

---

[7] Ա. Սարեան, *ԺԷ. դարի հայկական ուղեգրութիւնները, Երեւան, 2000, էջ 133–134:*

[8] *«Աստուածընտիր եւ սրբազան Տեառն Յակոբայ վեհապետիդ սուրբ գարշապարացդ երկրպագութիւն մատուցանեմ հրակէզ սիրով» (տե՛ս «Բազմավէպ», 1857, փետրուար, էջ 42–46):*

[9] *«Աստուածընտիր եր սրբազնափայլ Տեառնդ Յակոբայ վեհապետի՝ սուրբ գարշապարաց երկրպագութիւն մատուցանեմ հրակէզ սիրով» (տե՛ս «Բազմավէպ», 1883, հոկտ., նոյ., դեկտ., էջ 341–345):*

[10] *Վենետիկի հրատարակուած ձեռագրացուցակներում մեզ չհաջողուեց գտնել Յովհաննէս Տրապիզոնցու ուղեգրութիւնը պարունակող ձեռագրերի նկարագրութիւնը:*

կգտնուի, ուսկից որ առած անփոփոխ կը հրատարակենք»[11]: Ասուածից հետեւում է, որ ուղեգրութեան՝ 1857-ին հրապարակուած օրինակը Յովհաննէս Տրապիզոնցու իսկագիրն է: Սա, իհարկէ, վիճարկելի տեսակէտ է, քանի որ տուեալ հրատարակութեան համար հիմք դարձած ձեռագիրը ունի բաւական պակասող մասեր, որոնք առկայ են այլ ձեռագրերում: 1883-ին «Բազմավէպը» հրատարակում է Յովհաննէս վարդապետի նոյն նամակի մի ուրիշ ընդօրինակութիւնը. «Զնամականիս եւ յիշատակարանս՝ առատահոս աղբերս դիտելով, եւ դեռ սակաւ յոյժ ոռոգեալս՝ պատմական անդաստանի ազգիս մերոյ, ոչ փոյթ առնեմք երբեք երբեք զանտիպս եւ զպիտանիս ի նոցանէ, ըստ բերելոյ պատեհ պարագայից, որպէս մինչեւ ցայսօր արարաք, ի խուզարկութիւնս ձեռագիր մատենից Վանայս, ընծայել ի Բազմավիպիս՝ յօգուտ ուսումնասիրաց...»[12]: Ի տարբերութիւն նախորդի, ներկայ ձեռագրի հրատարակիչը չի նշում ձեռագրի իսկագիր լինելու մասին՝ անուղղակիօրէն յաւելելով, որ ձեռագրի «ուղղագոյն» տարբերակը պէտք է որ պահպանուած լինի Մայր Աթոռ Սբ. Էջմիածնի դիւանում. «Գտաք զսա ի նոտրգիր օրինակի՝ լի վրիպանօք, զորս դուն ուրեք ուղղեմք ըստ բանիցն եւ իմացուածոց. այլ զուղղագոյնն դիւրին իցէ գտանել անշուշտ ի դիւանս Էջմիածնի...»[13]:

Յաջորդ դարասկզբին Կոստանդնուպոլսում կատարուել է նոյն գրուածքի հրատարակութիւն մէկ այլ բնագրից՝ «Հնդկաստանի նուիրակի մը արկածները»[14] վերտառութեամբ: Հրապարակման համար առիթ է դարձել Յովհաննէս վարդապետի նամակի «հակիրճ մէկ ամփոփումը», որ հրատարակել է Հայկ Նիկողոսեանը Կ. Պոլսում լոյս տեսնող օրաթերթի՝ «Բիւզանդիոնի» էջերում, նոյն թուականի հոկտեմբերի 23-ի համարում՝ «Վարդապետի մը ոդիսականը (1763-ին գրուած նամակէ մը)» խորագրով[15]: Յօդուածագիրը նախ կարեւորում է այն հանգամանքը, որ այս կամ այն ձեռագրի հնութիւնից աւելի էական նշանակութիւն կարող է ունենալ տուեալ ձեռագրի՝ հանրութեանը տուած նորութիւնը. «Թող ձեռագիրը շատ հին թուական չկրէ, սակայն նորութիւն մ՚ ընծայէ, իր պարունակութեամբն երեւան բերէ նոր խնդիր մը որ ծածկուած մնացած էր»:

---

[11] «Բազմավէպ», 1857, փետրուար, էջ 42:

[12] «Բազմավէպ», 1883, հոկտ., նոյ., դեկտ., էջ341:

[13] Անդ:

[14] «Ծաղիկ» (գրական, գիտական եւ գեղարուեստական կիսամսեայ հանդէս), 1904, 10 նոյեմբեր, ԺԷ. տարի (570) - թիւ 5, էջ 216–223:

[15] «Բիւզանդիոն» 1904, 23 հոկտեմբեր, 8-րդ տարի, թիւ 2466:

Ապա նշում է, թէ որտեղ է տեսել ձեռագիրը. «Զեմ գիտեր ինչպէս սոյն նամակն եկած ինկած է Պօլսոյ Զարդարեան գրատունը, ուր աչքիս զարկաւ այս գրուածքը ու հետաքրքրուելով կարդացի, եւ պարունակութեանը վերահասու ըլլալով արժան համարեցի վրան մէկ երկու խօսք ըսել»: Յօդուածն իրենից ներկայացնում է Յովհաննէս վարդապետի ուղեգրութեան սոսկ նկարագրական վերլուծութիւնը, սակայն մէջբերուող հատուածներից պարզւում է, որ գործ ունենք գրուածքի մէկ ուրիշ ընդօրինակութեան հետ: Ասուածի վկայութիւններից է Յովհաննէս վարդապետի նամակի սկզբնամասից յիշեալ յօդուածում մէջբերուող կտորը, որը բացակայում է «Բազմավէպի» եւ «Ծաղիկի» հրատարակութիւնների համար հիմք դարձած ձեռագրերում, ինչպէս նաեւ Երեւանի մատենադարանի ընդօրինակութեան մէջ, որի մասին կխօսենք ներքեւում: Ահա այդ հատուածը. «Ի Յովհաննէս վարդապետէ Պոնտացւոյ Սուրբ էջմիածնի նուիրակէ համառօտ պատմութիւն անձից իւրոյ որ ի Բասրայու նաւել է ի Հնդկաստան»: Սա, փաստօրէն, մի վկայութիւն է չորրորդ ձեռագիրի գոյութեան մասին, որ գտնուել է Կ. Պօլսի Զարդարեան գրատանը[16]: Ինչ վերաբերում է «Ծաղիկի» հրատարակութեան համար հիմք հանդիսացած ձեռագրին, հրատարակիչը չի նշում դրա գտնուելու տեղը՝ բաւարարուելով այսքանով. «Մեր քով գտնուող ամբողջական օրինակէ մը կ՚ արտագրենք հոս այդ նամակը, որ շատ մը շահեկան տեղեկութիւններ կը պարունակէ»[17]: Աւելորդ չենք համարում յաւելել, որ ո՛չ «Բիւզանդիոնի», ո՛չ «Ծաղիկի» հրատարակիչներին ծանօթ չեն «Բազմավէպի» երկու հրապարակումները:

Գրուածքի մէկ այլ ընդօրինակութիւնը (գրիչ՝ Եփրեմ աբեղայ) պահպանուել է Երեւանի Մ. Մաշտոցի անուան մատենադարանի թիւ 618 ձեռագրում[18], որ զետեղուած է մի Ժողովածուի վերջին էջերում (82ա–7ա): Ժողովածուի 8ա–80բ էջերը գրչագրել է Եփրեմ վարդապետը, որը նկա-

---

[16] Պօլսի «Զարդարեան» գրավաճառանոցը 1901 թուականին հիմնել են պոլսահայ նշանաւոր թղթավաճառ եւ տպարանատէր Գէորգ Զարդարեանի (1834–1888)՝ Վահան (1872–1945) եւ Պիմեն (1881–՞) որդիները: Եղբայրները ծաւալել են նաեւ գրահրատարակչական լայն գործունէութիւն: Գրատանը ժամանակի ընթացքում հաւաքուել եւ պահուել են բազմաթիւ վաւերագրեր, ձեռագրեր, հրամանագրեր, փաստաթղթեր եւ արխիւային այլ կարեւոր նիւթեր: 1923-ին Վահան Զարդարեանը, բաժանուելով եղբօրից, մեկնել է Եգիպտոս եւ Կահիրէում բացել է մի նոր «Զարդարեան» գրատուն (տե՛ս Գ. Ստեփանեան, Կենսագրական բառարան, հատ. Ա., Երեւան, 1973, էջ 320–321):

[17] «Ծաղիկ», 1904, 10 նոյեմբեր, Ժէ. տարի (570)- թիւ 5, էջ 216:

[18] Ձեռագրի նկարագրութիւնը տե՛ս Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի, հատ. Գ., կազմեց՝ Օ. Եգանեան, Երեւան, 2007:

րագրողների երկբայական կարծիքով նոյնական է Եփրեմ աբեղայի հետ։ Վարկածի համար, հաւանական է, հիմք է ծառայել անունների նոյնութիւնը եւ թերեւս ձեռագրերի որոշ նմանութիւնը։ Ենթադրութիւնը, սակայն, չի կարելի հիմնաւոր համարել թէկուզ Ժողովածուում տեղ գտած նիւթերի պարզ հերթականութեան փաստը հաշուի առնելու պարագայում. քիչ հաւանական է, որ Եփրեմ վարդապետը սկսեր գրչագրել գրքի հիմնական մասը, ապա Ժողովածուի վերջում զետեղուած Յովհաննէս Տրապիզոնցու նամակն ընդօրինակելիս անուաներ իրեն աբեղայ։ Միւս կողմից՝ որպէս Ժողովածուի գրչութեան ժամանակ ձեռագրացուցակում նշուող 1763 թուականը չի համապատասխանում իրականութեանը, քանի որ դա Յովհաննէս վարդապետի նամակի՝ ուղեգրութեան յիշատակարանում արտայայտուած տարեթիւն է եւ վերաբերում է նամակի գրութեան ժամանակին, իսկ նամակը հետագայում ընդօրինակող Եփրեմ աբեղան գրչագրման տարեթիւ առհասարակ չի նշում։ Նոյնպէս եւ՝ Եփրեմ վարդապետը։ Կարող ենք պնդել, որ ժողովածուն պատկանում է աւելի ուշ շրջանի։ Նոյնը վերաբերում է նաեւ Ժողովածուի ընդօրինակման տեղին։ Սեյդաբադը ոչ թէ Ժողովածուի գրչագրման տեղն է, ինչպէս կարծում են ՄՄ ձեռագիր ժողովածուն նկարագրողները, այլ գրութեան վայրը Յովհաննէս վարդապետի ինքնագիր նամակի բնօրինակի, որն ընդամէնը ընդօրինակել է Եփրեմ աբեղան։ Ասուածից հետեւում է, որ Երեւանի Մ. Մաշտոցի անուան Մատենադարանի թիւ 618 ձեռագիր ժողովածուի գրութեան իրական տեղն ու ժամանակը մեզ անյայտ է։

Նշուած ուղեգրական նամակից զատ, ինչպէս վերեւում նշեցինք, «Բազմավէպում» հրապարակուել է նաեւ Յովհաննէս վարդապետի՝ նոյն դէպքերի կարճ վերաշարադրանքը պարունակող մէկ այլ նամակ՝ գրուած 1770-ի յունուարի 19-ին Կ. Պոլսում՝ առաքուած աստուածաբանութեան վարդապետ, Տրապիզոնի Ղազար Անմարմին (այսպ.) եպիսկոպոսին՝ «Թուղթ ազգային ճանապարհորդի մը»[19] խորագրով։ Ինչպէս «Ազգային յիշատակք նոր ժամանակաց» վերտառութեամբ նախաբանում գրում է հրատարակիչը, Յովհաննէս վարդապետի այս իսկագիր նամակը «Փարիզի Ազգային Դիւանի» թուրքերէն ձեռագրերի հաւաքածուից գտել, նրանից օրինակել եւ «Բազմավէպին» է ուղարկել «ազգասէր եւ ուսում-

[19] *«Բազմավէպ», 1884, ապրիլ. մայիս. յունիս, էջ 116–117։ Նոյնի աշխարհաբար թարգմանութիւնը տե՛ս «Միջնադարեան հայկական ուղեգրութիւններ երկու գրքով. ԺԵ.–ԺԸ. դարերի ուղեգրութիւններ, գիրք Բ.», էջ 222–224։*

նատենչ անձն մի, Պ. Յ. Տ.»։[20] Ղազար եպիսկոպոսը, որ նախկինում Ռումելիայի նուիրակն էր, այդ ժամանակ, հնարաւոր է, գտնուելիս է եղել Վենետիկում կամ Անքոնիայում։ Ահա ինչու Յովհաննէսն իր նամակում Ղազար վարդապետի հասցէն ստոյգ չի նշում. «Աստուծով հասցէ գիրս ի ձեռն Տեառն Ղազարու Արհիապատում Եպիսկոպոսի եւ աստուածաբանութեան վարդապետին՝ առ ի բարին, ի Վէնետիկ եւ կամ յԱնքոնիա»[21]։ Ղազար Անմարմին եպիսկոպոսը Յովհաննէսի նամակն ստացել է Անքոնիայում, քանի որ այդտեղ է ապրել եւ գործել 1766 թուականի յունիսի 7-ից մինչեւ իր մահը՝ 1783-ի փետրուարի 18-ը[22]։ Ներկայ գրուածքը գրական-գեղարուեստական առումով նոր բան գրեթէ չի աւելացնում Յովհաննէս վարդապետի՝ ուղիղ եօթ տարի առաջ գրած «Թղթին» եւ առաւել կարեւորութիւն է ստանում հեղինակի մասին կենսագրական որոշ փաստեր ճշտելու տեսանկիւնից։ Յօդուածի շարունակութեան մէջ այն կանուանենք երկրորդ նամակ։

Չնայած Յովհաննէս Տրապիզոնցու ուղեգրութեան՝ բաւականաչափ յայտնի եւ տարածուած լինելու հանգամանքին, վարդապետի անձը հայ բանասիրութեան ու եկեղեցու պատմութեան մէջ պատշաճ ուշադրութեան չի արժանացել։ Նրա կեանքի տարեգրութիւնը մեզ շատ կողմերով անյայտ է ներկայանում։ Հեղինակի հոգեւոր գործունէութեան մանրամասների մասին հետազօտողը շատ քիչ բան կարող է գտնել։ Յովհաննէս վարդապետի անունը բացակայում է կենսագրական բառարաններում եւ համապատասխան հանրագիտարաններում։ Նոյնիսկ այնպիսի կոթողային աշխատութեան մէջ, ինչպիսին Հր. Աճառեանի «Անձնանունների բառարանն» է, Յովհաննէսի անունը յիշուած չէ։ Անյայտ են նրա ծննդեան եւ մահուան թուականները։ Ծնուած պէտք է լինի ԺԸ. դարի առաջին քառորդին, ենթադրաբար Կ. Պոլսում։ Այդ վարկածի օգտին են վկայում վերը յիշուած երկրորդ նամակի հետեւեալ տողերը. «Եւ տեղս ի մեծն Պոլիս, ի յազնուաբարոյ իշխանաց զարմէ՝ բարեպաշտից հարազատաց եւ ի վաղեմի բարեկամաց, զքաղցրաբարոյ օրհնեալ Փիլիպպոս աղան գտեալ աստ, մեծ ցնծութիւն եւ մխիթարութիւն եղեւ անարժանիս»[23]։ Ինչպէս նաեւ՝ «Այլ եւ եղբարքն եւ

---

[20] *Անդ, էջ 115։*

[21] *Անդ։*

[22] Ղ. Ալիշան, *Սիսական, Վենետիկ, 1893, էջ 453։*

[23] *«Բազմավէպ», 1884, ապրիլ. մայիս. յունիս, էջ 117։*

մայրս Աստուծով կենդանի են. մեծ եղբայրս Պետրոսն տեղս է տնով. Կիւրեղն հարսանիք արաւ, երկու զաւակ ունի. Մարիամն մէկ որդի ունի. սուրբ աջդ համբուրեն»[24]: Մկրտութեան անունը՝ Սեղբոս[25], ազգանունը՝ Տէրմանուկեան կամ Տէր-Մանուկեան: «Ծաղիկի» հրապարակման մէջ ինքն իրեն անվանում է «Յովհաննէս վարդապետ Պոնտացի»[26]: Նոյնն է եւ «Բիւզանդիոն» պարբերականի էջերում վերլուծութեան ենթարկուած բնագրում: «Յովհաննէս վարդապետն Տրապզոնցի» անունով մի տեղ յիշւում է «Սիմէոն կաթողիկոսի յիշատակարանում»[27]: Նոյն կերպ Յովհաննէսին կոչում են «Բազմավէպի» հրատարակիչները[28] եւ Մ. Օրմանեանը[29]: Մի տեղ յիշատակւում է «Յովհաննէս [վարդա]պետն Պոլսեցի»[30]:

Յովհաննէս վարդապետը վերոնշեալ երկրորդ նամակի սկզբում Տէր Ղազարին յիշեցնում է. «...եւ մանաւանդ ի հեռի եւ ի պանդուխտ երկիր տարագրիլն եւ շրջիլն միմեանց է պատճառ, զի քսան ամ լրացաւ՝ որ բաժանեալք եմք ի միմեանց»[31]: Նամակի գրութիւնից՝ 1770-ից քսան տարի առաջ, այսինքն՝ 1750-ին, երբ վերջին անգամ տեսնուել են միմեանց հետ, Ղազար Անմարմին եպիսկոպոսը, որ կոչուել է նաեւ Պոնտոսեան[32]՝ Տրապիզոնի առաջնորդ լինելու պատճառով, այդ ժամանակ դեռեւս նոյն տեղում էր պաշտօնավարում, եւ հաւանական է, որ Յովհաննէս Տրապիզոնցին այդ ժամանակամիջոցում սպասաւորել է Տրապիզոնում՝ Տէր Ղազարի հետ: Չի բացառւում, որ Յովհաննէսի Տրապիզոնցի կամ Պոնտացի մականունները առնչուեն այս հանգամանքի հետ:

---

[24] Անդ:

[25] Տեր Ղազարին գրած նամակի վերջում կարդում ենք.

«Ծառայ Տէրութեանդ

Յովհաննէս Վարդապետ

Որ նախ Սեղբոս կոչէի» (տե՛ս «Բազմավէպ», 1884, ապրիլ. մայիս. յունիս, էջ 117):

[26] «Ծաղիկ», էջ 223:

[27] «Սիմէոն կաթողիկոսի յիշատակարանը» (տե՛ս Դիւան Հայոց պատմութեան, գիրք Գ., հրատ. Գիւտ քահանայ Աղանեանց, Թիֆլիս, 1894, էջ 758): Այսուհետ սոյն գրքի բոլոր յղումները՝ շարադրանքում՝ նշելով միայն էջը:

[28] «Բազմավէպ», 1857,փետրուար, էջ 42:

[29] Մ. Օրմանեան, Ազգապատում, Կ.Պոլիս, 1914, մասն Բ., էջ 3174: Օրմանեանը հիմք է ընդունել Պողոս Կաղզվանցու «Գիրք պատմութեան» գործի յիշատակումը (տե՛ս Դիւան Հայոց պատմութեան, գիրք Ժ., հրատ. Գիւտ քահանայ Աղանեանց, Թիֆլիս, 1912, էջ 326):

[30] Դիւան հայոց պատմութեան, նոր շարք, գիրք առաջին, Ղուկաս Կարնեցի, հատ. Ա. (1780–1785), աշխատասիրութեամբ՝ Վ. Գրիգորեանի, Երեւան, 1984, էջ 262:

[31] «Բազմավէպ», 1884, ապրիլ. մայիս. յունիս, էջ 116:

[32] http://shushankordonciyan.blogspot.com/2010/09/blog-post_7730.html.

Իր իսկ վկայութեամբ, որ գտնում ենք նոյն երկրորդ նամակում, 1755 թուականին Աժտարխանից (Աստրախան) երկու նամակ է գրել եւ ուղարկել այն ժամանակ Կ. Պոլսում գտնուող Տէր Ղազարին, երբ վերջինս արդեն Ուռումելիի (Ռումելիա) նուիրակ չէր։ Այնուհետեւ, 1758-ին Յովհաննէսը, ինչպէս ինքն է գրում նոյն նամակում, Աստրախանից վերադառնում է էջմիածին. «Իսկ մեք ի յԱժտարխանու եկաք ի սուրբ Աթոռն էջմիածին, որ էր թիւն Փրկչին 1758»[33]։ Կարելի է ենթադրել, որ մեր հեղինակն առնուազն 1755–1758 թուականներին եղել է Մայր Աթոռ Ս. էջմիածնի Աստրախանի նուիրակութեան թեմի նուիրակը կամ, որ աւելի հաւանական է, նուիրակի օգնականը[34]։ Նոյն 1758 թուականին Յակոբ Շամախեցի կաթողիկոսը Յովհաննէսին եպիսկոպոս է ձեռնադրում. «եւ ի նոյն ամին (1758.– Ա. Ս.) լուսահոգի սրբազան Յակովբ հայրապետն՝ զանարժանս եպիսկոպոս ձեռնադրեաց, եւ առաքեաց ի Հնդկաց երկիրն, սակս նուիրակութեան գործոյն ի մէջ Հայկազեան ազգին մերոյ»[35]։ Շարադրանքից երեւում է, որ Յովհաննէսի՝ եպիսկոպոս օծուելը եւ Հնդկաստանի նուիրակ նշանակուելը տեղի են ունեցել գրեթէ միաժամանակ՝ յաջորդելով մէկը միւսին։ Մենք չգիտենք, թէ ստոյգ երբ է Յովհաննէս վարդապետը նուիրակութեան գործերով դուրս եկել էջմիածնից, բայց 1762-ի յունուարին արդեն ընթացքի մէջ էր նրա յայտնի ուղեւորութիւնը դէպի Հնդկաց աշխարհ[36]։ Էջմիածնից դուրս գալը բնականաբար յաջորդել է միւռոնօրհնութեանը, որ կատարուել է Յակոբ Շամախեցի կաթողիկոսի ձեռամբ 1758–1761 թուա-

---

[33] *«Բազմավէպ», 1884, ապրիլ. մայիս. յունիս, էջ 116։*

[34] *Աւելի հաւանական է Յովհաննէս Տրապիզոնցու՝ նուիրակի օգնական սարկաւագի կամ այլ պաշտօնում սպասաւորելու վարկածը, քանզի տեսնում ենք, որ որեւէ հոգեւորականի նուիրակության ուղարկելուց առաջ կաթողիկոսը նրան եպիսկոպոս էր ձեռնադրում, իսկ Յովհաննէսը եպիսկոպոս է դարձել աւելի ուշ։*

[35] *Անդ։*

[36] *Առաջին թուականը, որ նշւում է ուղեգրութեան մէջ, 1762 թ. յունուարի 20-ն է, երբ Տրապիզոնցին իր ուղեկիցների հետ դուրս է գալիս Իրաքի Բասրա նաւահանգստային քաղաքից, որն այդ ժամանակ գտնւում էր թուրքերի տիրապետութեան տակ։ Էջմիածնից Բասրա հասել են Թուրքիայի տարածքով, ապա մտել են Իրաք՝ ճանապարհին նուիրակութեան գործերով անպայման մնալով Բաղդատում, որը Հնդկաց երկրի նուիրակութեան թեմի կարեւոր հայաբնակ քաղաքներից էր։ Այդ ճանապարհի տեւողութիւնը առանց երկար կանգառների պէտք է որ երկու ամսից աւելի լիներ։ Եթէ դրան գումարենք մօտաւորապէս մէկ-երկու ամիս, քանի որ նուիրակութեան գործերի պարտադրանքով պէտք է որ մնային Բաղդատում, ինչպէս նաեւ Բասրայում, ստացւում է, որ Յովհաննէս վարդապետը Մայր Աթոռը թողել է մօտաւորապէս 1761 թուականի ամռան վերջին կամ աշնան սկզբին։ Ամենայն հաւանականութեամբ դրանից քիչ առաջ տեղի է ունեցել նկարագրուող մեռոնօրհնութիւնը։*

կանների միջակայքում[37]։ Մեռոնօրհնութեան արարողութեանը իր մասնակցութեան մասին Յովհաննէս Տրապիզոնցին վկայում ուղեգրութեան վերջում. «...զի Ա[ստուա]ծագործ Ս[ուր]բ մեռօն այս զոր ը[նդ] անարժանիս յանձնե[ա]լ առաքեցիր յերկիրս այս Հնդկաց, մեծի սրբ[ա]զ[ա]նի տ[է]ութ[եա]նդ նախկին եւ անդրանիկ շնորհաբաշխութեան Սրբալոյս մեռօն օրհնէնքի պտուղն էր. որ ի ժամ օրհնելոյ եւ կարգ կատարելոյ սրբազնագործ իւղոյն, անարժանս եւս ի նմին ժամու ներկայացե[ա]լ ականասես էաք ի Սուրբ Աթոռն ցանկալի ի մէջ մեծահանդէս բազմութ[եան]ցն»[38]։

Յովհաննէս վարդապետի ստորեւ ներկայացուող «Թուղթը»՝ ուղղուած Յակոբ Ե. Շամախեցի կաթողիկոսին (1759–1763), որ վերաբերում է Բասրայից դէպի Դաքա կատարուած ծովային ուղեւորութեան արկածալից դիպուածների նկարագրութեանը, հեղինակը գրել է Հնդկաստանում, Բենգալիա գավառի Սեյդաբադ քաղաքում 1763 թուականի յունուարի 15-ին[39]։ Սակայն մինչ նամակը տեղ կհասներ, մարտի 21-ին Յակոբ կաթողիկոսը կնքում է իր մահկանացուն։ 1763 թուականի ապրիլի 20-ին կաթողիկոս է օծւում Սիմէոն Երեւանցին (1763–1780)։ Մայիսի 19-ից յետոյ, մի որոշ ժամանակ անց[40], մինչեւ նոյն թուականի սեպտեմբեր ամիսը Սիմէոն Երեւանցին մի քանի եպիսկոպոսների հետ ապաստանում է Ալաշկերտի Սբ. Յովհաննէս Մկրտիչ վանքում՝ զգուշանալով Պարսից Զանդ

---

[37] *Յակոբ Բ. Շամախեցու կատարած միւռոնօրհնութեան մասին տեղեկութիւններ չեն պահպանուել, առայժմ միակ աղբիւրը Յովհաննէս Տրապիզոնցու քննութեան առարկայ նամակն է։ Մասնագէտները 1729 թ. Կարապետ Բ. Ուլնեցու (կթղ. 1726–1729 թթ.) ձեռամբ տեղի ունեցած միւռոնօրհնութեան եւ 1765 թ. Սիմէոն Ա. Երեւանցու (կթղ. 1763–1780 թթ.) ձեռամբ կատարուած միւռոնօրհնութեան միջեւ սրբազան իւղի օրհնութեան որեւէ ուրիշ մեզ հասած յիշատակութիւն չեն նշում (տե՛ս Սրբալոյս միւռոնը հայ մատենագրութեան մէջ (Ե.–ԺԹ. դդ.), աշխատասիրութեամբ Վ. Գ. Դեհրիկեանի, Ս. Էջմիածին, 2021, էջ 27, 68)։ Յովհաննէս Տրապիզոնցու ուղեգրութեան շնորհիւ նոր փաստական տուեալ է աւելանում «Սրբալոյս միւռոնի օրհնութեան ժամանակագրութեան» մեջ (անդ, էջ 68–70)։ Նման մի տեղեկութիւն, այս անգամ արդեն Ղուկաս Կարնեցի կաթողիկոսի ձեռամբ 1783 թ. յունիսին կատարուած միւռոնօրհնութեան վերաբերեալ, գտնում ենք «Ղուկաս կաթողիկոսի կոնդակներում» (տե՛ս Դիւան Հայոց պատմութեան, գիրք Դ., հրատ. Գիւտ քահանայ Աղանեանց, Թիֆլիս, 1899)։ Միւռոնօրհնութեան մասին այս տուեալը եւս բացակայում է վերոյիշեալ «Սրբալոյս միւռոնի օրհնութեան ժամանակագրութեան» մէջ, որտեղ, որպէս ԺԷ. դարում տեղի ունեցած վերջին միւռոնօրհնութիւն, յիշւում է Սիմէոն Երեւանցու կողմից 1765 թ. կատարուածը։*

[38] *ՄՄ, ձեռ. համ. 618, էջ 86բ։*

[39] *«Բազմավէպ», 1857, փետրուար, էջ 46։*

[40] *«Ըստ այսմ Սիմէոն գլխաւոր միաբաններով Պայազիտի կողմը անցաւ 1763ի յուլիսի մէջ» (տե՛ս* Մ. Օրմանեան, *Ազգապատում, Կ. Պոլիս, 1914, մասն Բ., էջ 3026)։*

Քեարիմ խանի՝ սպասուող յարձակումից։ Արդեն սեպտեմբերի 20-ին, երբ վտանգն անցել էր, կաթողիկոսը վերադառնում է Էջմիածին։ Յովհաննէս եպիսկոպոսի՝ Յակոբ կաթողիկոսին հասցէագրած նամակը նորընտիր կաթողիկոս Սիմէոնը ստանում է հաւանաբար 1763 թ. յուլիս–օգոստոս ամիսների միջոցին, երբ դեռ Բագրեւանդում էր։ Ինչպէս գրում է Սիմէոն կաթողիկոսի քարտուղար Յովհաննէս դպիրը[41], «Ընկալաք մինչ ի Իւչքիլիսայն (Սբ. Յովհաննու վանքում.– Ա. Ա.) էաք զթուղթս ի նուիրակէն Հնդկաց Յովաննէս վարդապետէն՝ զյղեցելոյն Յակոբայ կաթողիկոսին առ որ գրեալ էր զթուղթն, եւ ի Բասրայու, ձեռամբ վանցի ումեմն փայեկի[42], որ պատմութիւն զնովաւ անցիցն, թէ զիարդ ի Բասրայու ի Հնդիկս նաւէր նա դիպեցաւ մեծագունի ալեկոծութեան...» (էջ 14)։ Ապա «Յիշատակարանի» հեղինակը շարադրում է Յովհաննէսին պատահած նոյն դէպքերի համառօտագրուած պատումը՝ համեմատաբար մանրամասնօրէն ներկայացնելով Սրբալոյս միւռոնի հրաշագործ զօրութեանն առնչուող դրուագը, որ ուղեգրութեան բովանդակային առանցքն է. «Եւ թէ զիարդ միւռոնն սրբալոյս ընկղմի ի ծովն ելով յարկեղ իմիք փակեցելում, ընդ որում լինին գրեանք եւ այլք գոյք Յովհաննէս վարդապետին, եւ յորժամ ի ցամաք ելանեն նոքա, յետ քանեաց աւուրց ի շրջիլն իւրեանց զհետ ուտելի նիւթոց՝ գտանեն ամբողջ կնքով եւ մեծահրաշ սքանչելեօք ելեալ ի ցամաք, սրբալոյս Մեռոնն միայն, իսկ արկղն եւ այլք գոյքն անդէն ի խորս ծովուն մնացեալք» (էջ 14)։ Պատասխան նամակներն արդեն Սիմէոն կաթողիկոսը սեպտեմբերի 18-ին նոյն վանեցի սուրհանդակի ձեռքով յղում է «Առ Յովաննէս վարդապետն մխիթարութիւն վասն փորձութեանն...» (էջ 15), ինչպէս եւ «զթուղթ օրհնութեան առ երիս ոմանս հայազուն զօրավարս, որք անդէն ի հնդիկս էին» (էջ 14–15)։

Նամակի՝ վերեւում նշուած համառօտագրութեան եւ մեզ ծանօթ բուն նամակի համեմատական վերլուծութիւնը ընթերցողին բերում է այն համոզման, որ կաթողիկոսի քարտուղարը վերաշարադրել է քննուղ նամակի բովանդակութիւնը։ 1763 թուականի յունուարի 15-ին գրուած նամակը փաստօրէն հասցէատիրոջը հասել է գրութիւնից առնուազն վեց ամիս յե-

---

[41] *Հետագայում, սարկաւագ ձեռնադրուելուց յետոյ անուանափոխւում է Իսահակ, ապա՝ յիշւում է որպէս Իսահակ Գեղամացի կամ Գեօղարքունցի արքեպիսկոպոս։ Եղել է Մայր Աթոռի առաջին տպարանի*

կառավարիչը եւ վերահսկողը (տե՛ս Գ.քահանայ Աղանեանցի ծանօթագրութիւնը՝ Դիւան Հայոց պատմութեան, գիրք Գ., էջ 807)։

[42] Փայեկ *(պարսկ.) – սուրհանդակ։*

տոյ։ Յովհաննէս Տրապիզոնցու նամակից երեւում է, որ Բասրա-Բանդար Սուրաթ-Կալկաթա ծովային ուղին ճանապարհորդները անցել են գրեթէ չորս ամսում. 1762 թուականի յունուարի 20-ին դուրս են եկել Բասրայից եւ յունիսի 23-ին հասել են Կալկաթա՝ Սուրաթում մնալով 42 օր։ Եթէ սրան գումարում ենք Էջմիածին-Բասրա ցամաքային ճանապարհը անցնելու համար պահանջուող մօտաւորապէս երկու ամիսը, ստացւում է նոյն վեց ամիսը, որի ընթացքում սուրհանդակը նամակը Բենգալիայից բերել-հասցրել է Մայր Աթոռ[43]*։*

Այլ հարց է, թէ ինչու է Յովհաննէս վարդապետը խնդրոյ առարկա նամակը գրում իր փրկուելուց ամիսներ անց։ Նաւաբեկեալները փրկութիւն են գտնում 1762 թուականի օգոստոսի 16-ին, ապա վեց օր նրանց պահում է անգլիացի հազարապետը, որից յետոյ տեղափոխւում են վերջինիս նստավայրը հանդիսացող Պաղրգանջ գիւղաքաղաք, որ երկու օր տեւողութեամբ ճանապարհով էր բաժանուած իրենց գտնուելու վայրից։ Ստացւում է, որ Յովհաննէս Տրապիզոնցին Պաղրգանջ է հասել օգոստոսի 24-ին կամ 25-ին։ Եւս ութ օր այնտեղ մնալուց յետոյ, սեպտեմբերի 1-ին կամ 2-ին Յովհաննէս վարդապետը հասնում է Դաքա՝ «մեր քրիստոնեայ ազգի մէջ»։ Յովհաննէս Տրապիզոնցին չէր կարող իր եւ իր ուղեկիցների գլխով անցած դէպքերի մասին կաթողիկոսին գրել Դաքա հասնելուց չորս եւ կէս ամիս յետոյ միայն, 1763 թուականի յունուարի 15-ին, ինչպէս որ թուագրուած է ուղեգրութեան յիշատակարանային մասում։ Դա կդիտուեր որպէս նուիրակի պարտաւորութիւնների ոչ պատշաճ կատարում[44]*։ Ամենայն հաւանականութեամբ Յովհաննէս Տրապիզոնցու մեզ յայտնի նամակին նախորդել է մէկ այլ նամակ՝ գրուած կարճ հաշուետուութեան կամ զեկոյցի ձեւով, որը հասել է հասցէատիրոջը՝ Յակոբ Շամախեցի կաթողիկոսին, երբ վերջինս դեռ ողջ էր։ Սակայն, մինչ Յովհաննէս վարդապետը կաթողիկոսից կստանար պատասխան նամակը, ձեռնամուխ է եղել մի նոր նամակ շարադրելուն արդէն յունուարի 15-ին՝ տեղի տալով հնդկահայ երեւելիների յորդորին՝ գրել արկածալից ճամփորդութեան մանրամասնները. «...զի ի տեղս ոմանք բարեպաշտօն իշխանք բ[ա]զում թախանձանօք*

---

[43] *Տե՛ս նաեւ 31-րդ ծանօթագրութիւնը։*

[44] *«Կաթողիկոսի եւ նուիրակի միջեւ եղած թղթակցութիւնն անպակաս է. նուիրակը իւր ամէն մի քայլի համար պէտք է տեղեկութիւն տա թղթով կաթողիկոսին» (տե՛ս* Խ. ԿԱՆԱՅԵԱՆ, *Էջմիածնի նուիրակութիւնը ԺԸ.դարում (պատմական ակնարկ), «Էջմիածին», 1977, փետրուար, էջ 51)։*

խնդրեցին ի մէնջ զի զամ[ենայն] անցսն մեր գրել եւ տալ իւրեանց. իբր նոր պատմութի[ւն] եւ լուր, իսկ մեք ո՛չ առեալ յանձն, այլ այժմ հարկն ստիպե[ա]ց զոր պա՛րտ էր զամ[ենայն] որպիսութի[ւ]ն մեր գրով ծանուցանել գերափառ Տ[եառ]նդ իմոյ»[45]:

Կալկաթայի հայերի՝ 1764 թուականի փետրուարի 10-ին Սիմէոն Երեւանցուն գրած մի նամակում հեղինակները, շնորհաւորելով նրան կաթողիկոս ընտրուելու կապակցութեամբ, չեն մոռանում գովեստի եւ գնահատանքի խօսքերով բնութագրել Յովհաննէս վարդապետին, ինչը վկայում է, որ կարճ ժամանակամիջոցում նուիրակն արդեն սիրուած եւ յարգուած էր հնդկահայերի շրջանում: Իհարկէ, Յովհաննէս Տրապիզոնցու հանդէպ նման վերաբերմունքը հետեւանք էր նաեւ Սրբալոյս միւռոնի հրաշագործութեան մասին այն պատմութեան, որ անմիջականօրէն առընչւում էր Յովհաննէսի անվան հետ: «Ի ՌՄԺԲ. (1763) թուին եւ յամսեանն ի մարտի ԻԸ. ծայրագոյն նուիրակ սրբոյ Աթոռոյդ էջմիածնի, խոհեմազարդ եւ համեղաբան Յոհաննէս վարդապետն հրամանաւ լուսաւոր հոգի Յակոբ Հայրապետին եկն եւ ժամանեաց ի Կալկաթայ, ընդ ինքեան ունելով զսուրբ մեռոնն որ բաշխեաց առ հասարակ ամենեցունց վարդապետութեամբ զշնորհ եւ զօրհնութիւն»[46]: Վաւերագրից պարզ է դառնում, որ նուիրակը Կալկաթա է հասել 1763 թուականի մարտի 28-ին՝ Բենգալիայի մայրաքաղաքում մնալով առնուազն մինչեւ 1764 թուականի փետրուար ամիսը, երբ գրուել է կալկաթահայերի նամակը: Կալկաթան, ինչպէս կարդում ենք քննուող Ուղեգրութիւնում, Տրապիզոնցու ծովային ուղեգնացութեան վերջին կայանն էր. «...որ կամէաք գնալ ի Բանկալայ յանկոյս ծովուն աշխարհին Հնդկաց ի մեծ նաւահանգիստ քաղաքն Կալկաթա կոչեցեալ, ուր կայր բազմաթիւ ազգիս Հայոց»[47]: Այնտեղից պէտք է ցամաքային կամ գետային ճանապարհներով, նուիրակութեան գործերին հետամուտ, Յովհաննէս վարդապետը մեկներ դէպի միւս կարեւոր բնակավայրերը, որտեղ հաստատուած էին հայկական համայնքներ եւ բնականաբար կային գործող եկեղեցիներ: Սակայն նաւաբեկութիւնը փոխում է սահմանուած ուղին եւ նա ստիպուած էր տեւական ժամանակ

---

[45] *ՄՄ, ձեռ. համ. 618, էջ 87ա:*

[46] *ՄՄ, Կաթողիկոսական դիւան, թղթ. հմր. 2, վավ. 14: Նույնը՝ տե՛ս թղթ. հմր. 257, վավ. 6: Վաւերագիրը շրջանառութեան մեջ է դրել Ա. վրդ. Խաչատրեանը (տե՛ս Տ. Ա. ՎՐԴ. ԽԱՉԱՏՐԵԱՆ, «Նուիրակութիւնը Հայոց եկեղեցում» (Ժ.–ԺԹ. դարեր), Մայր Աթոռ Սուրբ էջմիածին, 2004, էջ 96):*

[47] *ՄՄ, Ձեռ. համ. 618, էջ 82 բ:*

մնալ Դաքայում (1762-ի սեպտեմբերի 1-ից)։ Յայտնի է, որ նուիրակներն առհասարակ, ի տարբերութիւն եկեղեցական առաջնորդների, բնակութեան մշտական կայուն տեղեր չունէին, եւ պէտք է որոշակի ժամկէտներով գործունէութիւն ծաւալէին նուիրակութեան թեմի տարբեր քաղաքներում, ինչպէս որ Յովհաննէս վարդապետին ենք տեսնում Բասրայում[48], Սուրաթում, Սեյդաբադում եւ Կալկաթայում։

Ինչպէս երեւում է «Սիմէոն կաթողիկոսի յիշատակարանից», Յովհաննէս վարդապետը, նուիրակութեան գործերն աւարտելով, Հնդկաստանից էջմիածին է վերադառնում 1766 թուականի հոկտեմբերին. «Նուիրակն Հնդկաց Յովհաննէս վարդապետն... եկեալ ի սուրբ Աթոռս էհաս անվնաս» (էջ 568)։ Կաթողիկոսը որոշում է Յովհաննէսի փոխարէն Հնդկաց նուիրակ կարգել վերջինիս սպասաւոր Յովսէփ վարդապետին։ «Արդ որովհետեւ՝ նուիրակն Հնդկաց Յովհաննէս վարդապետն եկեալ ի սուրբ Աթոռս էհաս, վասն որոյ՝ հոգացաւ սրբազան վեհն յղել զսպասաւորն նորին Յովսէփ վարդապետն ի նորոգ նուիրակութիւն երկրին Հնդկաց» (էջ 642)։ Արդեն 1767 թուականի փետրուարի 11-ին Սիմէոնը նրան ձեռնադրում է եպիսկոպոս, ինչը պարտադիր պայման էր նուիրակ նշանակուելու համար (անդ)։ Սա ամենայն հաւանականութեամբ նոյն տէր Յովսէփն[49] է, նաւաբեկութիւնից փրկուած հինգ հայերից մէկը, որի անունը իր ուղեգրութեան մէջ երկու տեղ նշում է Յովհաննէս եպիսկոպոսը։ Հնարաւոր է, որ վերջինս էլ իր օգնական սարկաւագ Յովսէփին ձեռնադրել էր վարդապետ[50]։

1767 թուականի օգոստոսին Սիմէոն Երեւանցին Յովհաննէս վարդապետին նշանակում է Ռումելիայի (Ուռումելիի) կամ Ղրիմի նուիրակ.

---

[48] Բասրան, ինչպէս արտայայտուած է Երեմիա Օշականցու ցուցակում (տե՛ս Դիւան Հայոց պատմութեան, գիրք Դ., էջ 801), մտնում էր ոչ թէ Հնդկաց, այլ Բաղդատի «Տէրունի» թեմի մէջ, բայց Մայր Աթոռը երկու թեմերի համար, որպէս կանոն, մէկ նուիրակ էր կարգում։ Դա պարզ երեւում է «Սիմէոն կաթողիկոսի յիշատակարանի» այն հատուածում, որ վերաբերում է նուիրակութեան պաշտօնում Յովհաննէս եպիսկոպոսին յաջորդող Յովսէփ վարդապետին. «Եւ ապա կարգեաց ի նուիրակ սրբազան Վեհրն զՅովսէփ վարդապետն ի վերայ ամենայն երկրին Հնդկաց. նաեւ Բաղդատու եւ Բասրայու» (նշ. աշխ., էջ 643)։

[49] Յովսէփ վարդապետը իր մահկանացուն կնքել է 1772-ին։ Տե՛ս «Թուղթ ի Հնդիկս, առ իշխանն տեղւոյն գլխաւորս. Վասն մահուան Սրբոյ Աթոռոյս նուիրակ Յովսէփ վարդապետին, որ ի մէջ նաւին ի գալն յայսկոյս վախճանեալ էր...» (տե՛ս ՄՄ, ձեռ. 2912, նժբ. 252 աբ)։

[50] «Նուիրակութեան միջոցին եպիսկոպոս նուիրակը իւր սպասաւոր սարկաւագին վարդապետ է ձեռնադրում ժողովրդի բազմութեան առաջ, որպէսզի այսպիսի հանդէսներից զուրկ չմնա ժողովուրդը» (տե՛ս Խ. Կանայեան, էջմիածնի նուիրակութիւնը ԺԸ. դարում (պատմական ակնարկ), «էջմիածին», 1977, փետրուար, էջ 51)։

«Իսկ եւ յՈւռումէլու երկրին, զՅովհաննէս վարդապետն Տրապզոնցի՝ կարգեաց սրբազան վեհրն նուիրակ, որ յառաջ էր նուիրակ երկրին Հնդկաց» (էջ 758)։ Մինչեւ առնուազն 1770 թուականը Յովհաննէսը եղել է Ռումելիայի նուիրակը, քանի որ վերեւում նշուած իր երկրորդ նամակը գրելու ժամանակ (1770 թ., Կ. Պոլիս) այդ պաշտօնն էր զբաղեցնում։ Հետագայ շարադրանքում կտեսնենք, որ Ուռումելիի նուիրակութեան պաշտօնը վարել է մինչեւ 1773 թուականը։ Միւս կենսագրական փաստը, որ կարելի է վերականգնել, այն է, որ Յովհաննէս վարդապետը Մայր Աթոռից Ռումելիայի նուիրակութեան գործերով դուրս է եկել յիշեալ նամակը գրելուց երկու տարի առաջ, այսինքն՝ մօտաւորապէս 1768 թուականի յունուարին. «Եւ այժմ (1770 թ., յունուար 19.– Ա. Ս.) չորս ամ եղեւ՝ որ եկաք ի սուրբ Աթոռն էջմիածին անվնաս (1766-ին, ինչպէս որ Սիմէոնի յիշատակարանում է արձանագրուած.– Ա. Ս.). Եւ այս երկու ամ է՝ որ ելեալ եմ ի սրբոյ Աթոռոյն էջմիածնի, սակս գործոյ նուիրակութեան Ուռումէլու. բայց սասանմանցն ժամանակիս[51]՝ ոչ կարացաք զգործն մեր կատարել. վասն որոյ եկաք ի մեծն Պոլիս, եւ այժմ ունայն ի գործոյ նստիմք աստ, մինչեւ Տէր յաջողեսցէ զբարի ժամանակ»[52]։ Նոյն մտահոգութիւնները Յովհաննէս Տրապիզոնցին, բնականաբար, յայտնել էր Սիմէոն Երեւանցի կաթողիկոսին, ինչը երեւում է վերջինիս՝ 1769 թուականի նոյեմբերին Յովհաննէս եպիսկոպոսին յղած նամակի հանգամանքների նկարագրութիւնից։ Միեւնոյն ժամանակ նամակից պարզ է դառնում, որ Յովհաննէս վարդապետը 1769-ին դեռեւս Կոստանդնուպոլսում էր։ Մայր Աթոռից, ինչպէս վերեւում նշեցինք, նուիրակելու էր մեկնել 1768 թ. սկզբին։ «Թուղթ մի եւս առ Ուռումէլու նուիրակ Յովհաննէս վարդապետն, որ տրտում եւ յուսահատ նստէր ի Պոլիս։ Պատուէր՝ առ Զաքարիա[53] վարդապետն մնալ յայս ձմռանս, եւ մի

---

[51] *Նկատի է առնում ռուս-թուրքական պատերազմը (1768–1774)։ 1769-ին Կ. Պոլսի նուիրակ Զաքարիա վարդապետի խնդրանքով Սիմէոն Երեւանցին մխիթարութեան թուղթ է առաքում պոլսահայ հաւատացեալներին. «Խնդրեալ էր նուիրակն մեծին Պոլսոյ Զաքարիա վարդապետն զթուղթս ինչ սրբազան վեհէն, զորս եւ յղեաց. որք են թուղթ մի ի վերայ քաղաքին Պոլսոյ, մխիթարութիւն եւ սփոփութիւն սակս նեղութեանց զոր կրէին։ Զի վասն մեծ պատերազմին Ռուսաց՝ սով էր անկեալ ի Պոլիս, եւ ամենեքեան ահաբեկ լեալ՝ կային ի մէջ տրտմութեան» (տե՛ս «Սիմէոն կաթողիկոսի յիշատակարանը», մասն երկրորդ (1767–1776), Դիւան Հայոց պատմութեան, գիրք Ը., հրատ. Գիւտ քահանայ Աղանեանց, Թիֆլիս, 1908, էջ 106)։*

[52] *«Բազմավէպ», 1884, ապրիլ. մայիս. յունիս, էջ117։*

[53] *Կ. Պոլսի նուիրակ։* Զաքարիա Բ Փոfուզյան Կաղզվանցի *(մօտ 1720 – 1799, Կ. Պոլիս), Կ. Պոլսի հայոց պատրիարք 1773–81 եւ 1782–99-ին։ Զաքարիա վարդապետին 1767 թ. Կ. Պոլիս նուիրակի պաշտօնով ուղարկել էր Սիմէոն Երեւանցի կաթողիկոսը։ Եօթ տարի անց արդեն ընտրւում է պատրիարք։*

զերկուս ծախս առնել, մինչեւ եթէ ի գարնանն անդորրութիւն լիցի...»[54]։ 1772 թուականի յունիսի դրութեամբ Յովհաննէս Տրապիզոնցին դեռեւս յիշւում է որպէս Ռումելիայի նուիրակ[55]։ Ենթադրելի է, որ դրանից շատ չանցած կաթողիկոսական կոնդակով Յովհաննէս վարդապետի նուիրակութեան թեմը փոխուել է վերջինիս՝ Ռումելիայում որպէս Սբ. էջմիածնի նուիրակ սպասաւորելու հինգ տարին լրանալուց յետոյ, մօտաւորապէս 1773 թուականի ընթացքում։ «Սիմէոն կաթողիկոսի յիշատակարանի» երկրորդ մասում արդեն 1774 թուականի փետրուարին որպէս Ռումելիայի նոր նուիրակ է յիշատակւում Պետրոս վարդապետը[56]։ Նոյն թուականի մարտ-ապրիլ ամիսներից Յովհաննէս Տրապիզոնցին առաջին անգամ յիշւում է որպէս Գաղատիայի կամ Անկիւրիայի (Անկարա) նուիրակ։ Այսպէս, Սիմէոն կաթողիկոսը նամակ է յղում Յովհաննէս վարդապետին՝ ի պատասխան վերջինիս՝ 1773 թ. նոյեմբերի 2-ին գրած նամակի. «Զի ըստ հրամանի սրբ. վեհին ի Գաղատիա էր գնացեալ (Յովհաննէս վարդապետը.– Ա. Ս.) ի նուիրակութիւն, եւ զգնալն իւր ծանուցեալ սրբ. վեհին։ Եւ ի նուիրակական արդեանցն իւրոց դրամ (45 ղ) էր յղեալ առ Զաքարիա վարդապետն ի Պոլիս, եւ գրեալ սրբ. վեհին զյղելն։ Եւ սրբ. վեհն զթուղթս զայս իբր զղապզ[57] գրեալ յղեաց առ նա, զի զդրամն... իւր առ մեզ հասեալ իմասցի, եւ միամտեսցի»[58]։ Շարունակութեան մէջ կաթողիկոսը պատուիրում է Յովհաննէսին՝ նախկին, Ռումելիայի նուիրակութեան շրջանից մնացած, Մայր Աթոռին տրուելիք գումարը փոխանցել Զաքարիա վարդապետին։ Բացի այդ, այսուհետեւ Յովհաննէս Տրապիզոնցին իր նուիրակութեան արդիւնքում ձեռք բերուած ողջ գումարը պէտք է ուղարկեր Կ. Պոլսի պատրիարքին։ Նաեւ ապսպրւում էր էջմիածնի հոգեւորականների հանդերձանքի համար անհրաժեշտ կտորեղէն ձեռք բերել եւ ուղարկել Կոստանդնուպոլիս՝ այնտեղից հետագայում Մայր Աթոռ տեղափոխելու նպատակով. «Կրկին պատուէր՝ զի քանի մի թօփ վեղարացու եւ փիլոնացու զուֆ[59] եւ շալեղէն հոգացեալ առ Զաքարիա վարդապետն հասուցէ

---

[54] «Սիմէոն կաթողիկոսի յիշատակարանը», մասն երկրորդ (1767–1776) (տե՛ս Դիւան Հայոց պատմութեան, գիրք Ը., հրատ. Գիւտ քահանայ Աղանեանց, Թիֆլիս, 1908, էջ 107)։

[55] Անդ, էջ 216։

[56] Անդ, էջ 280։

[57] Ղապզ (արաբ.) – ստացական, անդորրագիր։

[58] «Սիմէոն կաթողիկոսի յիշատակարանը», մասն երկրորդ (1767–1776) (տե՛ս Դիւան Հայոց պատմութեան, գիրք Ը., հրատ. Գիւտ քահանայ Աղանեանց, Թիֆլիս, 1908, էջ 307)։

[59] Զուֆ (արաբ.) – բուրդ։

ի Պոլիս, որոյ եւ զդաւթարն առ մեզ յղեսցէ, զի անտի բերել տացուք զայն ի սուրբ Աթոռս առ մեզ»[60]։

1775-ին Սիմէոնը յունիսի 10-ին նամակ է գրում Պոլսում գտնուող Գաղատիայի նուիրակ Յովհաննէս վարդապետին՝ վերջինիս կանչելով էջմիածին. «...հարկ՝ զի եկեսցէ ի ս. Աթոռս. որովհետեւ ասէ զգործդ զերծեալ ես ահա, եւ պիտոյ եւս ես մեզ հարկաւորապէս»[61]։ Նոյն ամսի 23-ին գրուած նամակում կրկնում է վեհի պահանջը Մայր Աթոռ վերադառնալու մասին եւ աւելացնում. «Զի թէ գործ ինչ խնդրեսցես ասէ, աստէն յղելոց եմ»[62]։ Սակայն յետոյ, արդեն 1775 թուականի օգոստոսին կաթողիկոսը փոխում է իր մտադրութիւնը. «Զի թէպէտ ի յունիսի Ժ. եւ ի ԻԳ. գրեաց (Սիմէոնը.– Ա. Ս.) նմա (Յովհաննէս վարդապետին.– Ա. Ս.) գալ ի ս. Աթոռս, բայց յետոյ զայլ իմն մտածելով, այժմ կրկին նուիրակ արար զնա ի վերայ Ուռումելու եւ գրեաց նմա, զի զհաշիւն իւրոյ նուիրակութեան պատրիարքին տացէ, եւ զթիւ Ուռումելու կոնդակին փոխեսցէ, եւ յՈւռումելին նուիրակ երթիցէ։ Գրեաց եւս՝ եթէ Մեռոնդ պակաս իցէ ասէ, ի պատրիարքէն առ։ Եւ թէ գիր ինչ պիտոյասցի ընդ քեզ տանելոյ, խնդրեա՛ ասէ ի մէնջ, զի յոգացեալ յղեսցուք»[63]։ «Սիմէոն կաթողիկոսի յիշատակարանի» երկրորդ մասում 1776 թուականին վերաբերող գրառումների մէջ երկու անգամ անդրադարձ է կատարւում «Ուռումէլու նուիրակ Յովհաննէս վարդապետին» յղուած նամակներին (հոկտեմբերի 11 եւ դեկտեմբերի 4)։ Առաջին նամակի բովանդակութիւնից յայտնի է դառնում, որ Յովհաննէսն այդ ժամանակ գտնուելիս է եղել Ռումելիայի նուիրակութեան հայաբնակ վայրերից մէկում՝ Քիլում[64]։

Որպէս Ռումելիայի նուիրակ Յովհաննէս վարդապետը յիշւում է Սիմէոն կաթողիկոսի յիշատակարանի երրորդ մասի՝ 1777 թուականի մարտի 29-ին[65], 31-ին[66], սեպտեմբերի 14-ին[67] եւ հոկտեմբերի 12-ին[68], ինչպէս

---

[60] *«Սիմէոն կաթողիկոսի յիշատակարանը», մասն երկրորդ (1767–1776) (տե՛ս Դիւան Հայոց պատմութեան, գիրք Բ., հրատ. Գիւտ քահանայ Աղանեանց, Թիֆլիս, 1908, էջ 307)։*

[61] *Անդ, էջ 439։*

[62] *Անդ, էջ 453։*

[63] *Անդ, էջ 465–466։*

[64] *Անդ, էջ 512։*

[65] *«Սիմէոն կաթողիկոսի յիշատակարանը», մասն III – վերջին (1777–1779) (տե՛ս Դիւան Հայոց պատմութեան, գիրք ԺԱ., հրատ. Գիւտ քահանայ Աղանեանց, Թիֆլիս, 1913, էջ 71–72)։*

[66] *Անդ, էջ 85։*

[67] *Անդ, էջ 171։*

[68] *Անդ, էջ 174։*

նաեւ 1778 թուականի ապրիլի 12-ին[69] եւ յունիսի 20-ին[70] վերաբերող հատուածներում։ 1779 թուականի ապրիլ-մայիս ամիսներին կաթողիկոսը նամակ է յղում Յովհաննէս վարդապետին, որից պարզւում է, որ վերջինս այլեւս Ռումելիայի նուիրակը չէ, եւ Սիմէոն Երեւանցին նամակով յորդորում է Յովհաննէս Տրապիզոնցուն վերադառնալ Մայր Աթոռ Ս. Էջմիածին. «Թուղթ առ Ուռումէլու գործաւարտ նուիրակ Յովհաննէս վարդապետն, յիշեցուցանելով նմա զպայմանն որ պայմանեաց գալ ի գարնանս. ահա ասէ Զատիկն անցեալ՝ Համբարձումն եւ գարունն եւս անցանեն։ Եթէ ի ճանապարհի ես, բարւոք է, իսկ թէ տակաւին չես ելեալ, ելլ եւ եկ, զի այս է ժամանակ գալուն։ Եւ թէ տակաւին եւս մնալոյ ես, եւ չես գալոյ, ապա՝ գրեա՛ զմիտսդ պարզապէս՝ զի գիտասցուք։ Մի՛ կարծիցես թէ՝ զկարծիս ինչ զքէն ունիմք, միամիտ եմք. հետանալուդ պատճառ չգիտեմք։ Եւ յոյժ հարկ ի գալ՝ յորդորմամբ»[71]։ Ամեն ինչից հետեւում է, որ Յովհաննէս վարդապետը չի համաձայնել վերադառնալ Էջմիածին եւ, կաթողիկոսից համապատասխան համաձայնութիւն ստանալով, հաւանաբար շարունակել է նուիրական առաքելութիւնը արդեն որպէս Գաղատիայի (Անկիւրիայի) նուիրակ։

Սիմէոն Երեւանցուն յաջորդած Ղուկաս Կարնեցու (1780–1799) կաթողիկոսութեան առաջին տարիներին Յովհաննէս վարդապետ Տրապիզոնցին յիշւում է իբրեւ Գաղատիայի նուիրակ[72]։ Գաղատիայի կամ Անկիւրիայի նուիրակ կարգուել է հաւանաբար 1779-ին, Սիմէոն կաթողիկոսի հրամանով, քանի որ այդ ժամանակ արդեն աւարտել էր Ռումելիայի նուիրակութեան գործերը։ Յովհաննէս Տրապիզոնցու մասին առաջին յիշատակութիւնը, որ հանդիպում ենք Ղուկաս Կարնեցու դիւանում, վերաբերում է 1780 թուականի օգոստոսի 4-ով թուագրուած նամակին՝ ուղարկուած Կ. Պոլսի նուիրակ Մինաս վարդապետին եւ Մահսարատար Պետրոս վարդապետին։ Այստեղ Յովհաննէսի անունը չի նշւում, բայց, ինչպէս երեւում է հետագայ շարադրանքից, «Գաղատիոյ նուիրակ»-ն ինքն է։ Իր նախորդի հետեւութեամբ Ղուկաս կաթողիկոսը նոյնպէս Յովհաննէս վարդապետին ժամանակ առ ժամանակ ետ էր կանչում Մայր

---

[69] *Անդ, էջ 247։*

[70] *Անդ, էջ 317։*

[71] *Անդ, էջ 393։*

[72] *«Ղուկաս կաթողիկոսի կոնդակներ» (տե՛ս Դիւան Հայոց պատմութեան, գիրք Դ., հրատ. Գիւտ քահանայ Աղանեանց, Թիֆլիս, 1899)։*

Աթոռ. «Վասն Գաղատիոյ նուիրակին եւս ահա գրեցաք պատրիարքին, եւ Մահտեսի Յարութիւն Ամիրային, միամիտ առնել եւ ի սուրբ Աթոռս յղել, եւ իւրեան գրեցաք միամտութեամբ գալ ի սուրբ Աթոռս։ Դուք եւս յորդորելով եւ միամիտ առնելով, յօժարեցուսջիք դառնալ աստ»[73]։ Հակառակ պարագայում, այսինքն՝ Յովհաննէս վարդապետի չվերադառնալու դէպքում, պատուիրւում է նրանից վերցնել Մայր Աթոռին պատկանող գումարը. «Իսկ եթէ ոչ եկեսցէ, ահա գրեցաք դարձեալ պատրիարքին եւ մահտեսի Յարութիւն Ամիրային զի ընդ ձեզ եւ միասին տեսցեն զհաշիւն, եւ առնուցուն զարդիւնսն սրբոյ Աթոռոյս որ ինչ մնացեալ է առ ինքն. եւ ձեզ յանձնեսցեն թէ դրամ, թէ յիշատակի որոց զդաւթարն ինքն յղեալ է աստ եւ գոյ առ մեզ եւ թէ այլ ինչ»[74]։ Ղուկաս Կարնեցու Կոնդակներում պահպանուած նոյն թուականի մի նամակի բովանդակութեան վերաշարադրանքից երեւում է, որ Յովհաննէս Տրապիզոնցին ներկայացրել է, ներկայ եզրոյթով ասած, դրամական ինչ-որ հաշուետուութիւն. «Առ Յովհաննէս վարդապետ նուիրակն Գաղատիոյ ի միամտութիւն։ Վասն հաշուարարութեան իւրոյ»[75]։ Հետաքրքիր է, որ 1780-ի սեպտեմբերին Ղուկաս Կարնեցին «ի վերայ Գաղատիոյ եւ շրջակայից նորին» կոնդակ է հրապարակում եւ Յովհաննէս Վարդապետին նորից հաստատում է Գաղատիայի նվուիրակ. «Յորում եւ կրկին հաստատութիւն Յովհաննէս վարդապետին ի գործն նուիրակութեան»[76]։ Այստեղ խօսքը վերաբերում է ոչ թէ նուիրակ հաստատելուն, այլ ընդամէնը վերահաստատելուն, ինչը երեւում է 1781 թուականի մարտ ամսին գրուած կաթողիկոսի մի նամակի վերաշարադրանքից. «Նաեւ վասն Գաղատիոյ նուիրակ Յովհաննէս վարդապետին խնդրեալ էին սոքա (պոլիսցի տիրացու Յովհաննէսը եւ պրուսացի տիրացու Սիմէոնը.– Ա. Ս.) ի սրբազան Վեհէն՝ ունիլ ի խնամս եւ զվերահաստատութեան կոնդակ յղել սակս մնացեալ գործոյն»[77]։ Իսկ նոյն ամսին գրուած մի նամակով կաթողիկոսը Գաղատիայի առաջնորդ Ստեփաննոս վարդապետին յանձնարարականներ է տալիս՝ կապուած Յովհաննէս վարդապետի գործունէութեան հետ. «Իսկ յայս թղթոջս եւ յանձնարարութիւն

[73] *Անդ, էջ 97։*

[74] *Անդ, էջ 97–98։*

[75] *Անդ, էջ 491։ «Հաշուարարութիւն» բառը չենք գտնում գրաբարի բառարաններում, հաւանաբար իմաստով մօտ է հաշուետուութեանը։*

[76] *Դիւան հայոց պատմութեան, նոր շարք, գիրք առաջին, Ղուկաս Կարնեցի, հատ. Ա. (1780–1785), աշխատասիրութեամբ՝ Վ. Գրիգորեանի, Երեւան, 1984, էջ 111։*

[77] *Անդ, էջ 214։*

վասն տեղւոյն նուիրակ Յովհաննէս վարդապետին»[78]։ Պահպանուել է նոյն սեպտեմբերին թուագրուող Ղուկաս կաթողիկոսի մէկ այլ նամակը՝ ուղղուած հենց Յովհաննէս վարդապետին։ Նամակի համառօտագրութիւնից իմանում ենք, որ վերը Յովհաննէսին հաղորդում է Սիմէոն կաթողիկոսի մահուանը եւ իր՝ կաթողիկոս ընտրուելուն վերաբերող «բազմակնիք թղթի» մասին, որ գրել են Սուրբ Աթոռի միաբանները եւ «երկրացիքս մեր ի մեծն Պոլիս»։ Ապա կաթողիկոսը յորդորում է, որ Յովհաննէս նուիրակը, շրջելով նշանաւոր տեղերում, ընթերցել տայ այդ կոնդակը եւ իր առաջին օրհնութեան թուղթը։ Յայտնի փաստ է, որ շուրջ երկու տարի Պոլսի Զաքարիա պատրիարքը Ղուկաս Կարնեցու ընտրութիւնը չէր ընդունում՝ համարելով այն ոչ օրինական։ Նորընտիր կաթողիկոսի անունն արտասանելը արգելուած էր Պոլսոյ պատրիարքին ենթակայ եկեղեցիներում[79]։ Այս առումով թերեւս կարեւոր էր, որ Գաղատիայի թեմում, որ գտնւում էր Պոլսի պատրիարքի ազդեցութեան ներքոյ, ընդունուեր կաթողիկոսի ընտրութեան փաստը։ Եւ վերջում նորից, ինչպէս որ սպասելի էր, կաթողիկոսը Յովհաննէս վարդապետին պատուիրում է նուիրակութեան անաւարտ մնացած գործերը կատարել եւ ապա Սբ. Էջմիածին վերադառնալ. «Իսկ եւ զայս յատուկ գրեաց, թէ ջանա զմնացորդսն գործոյդ աւարտել եւ ի սուրբ Աթոռս դիմել»[80]։

Շարունակութիւնը՝ յաջորդիւ

[78] *Անդ, էջ 111։*

[79] *«Անուն Ղուկասու կաթողիկոսի ո՛չ իսկ եւ իսկ յիշատակեցաւ յեկեղեցիս Հայոց որ յՕսմանեան Տէրութեան. զի Զաքարիա պատրիարք Կոստանդնուպօլսոյ նախապատիւ համարելով զանձն քան զնա, զչարեալ իմն էր՝ թէ ընդէ՞ր եւ ինքն չհրաւիրեցաւ յայն բարձրագոյն աստիճան. ուստի պատճառելով՝ թէ առանց իւրոյ գիտութեան կամ ազգային հաւանութեան լեալ է ընտրութիւնն Ղուկասու՝ արտաքոյ սովորական կարգի, արգել զհանումն հրովարտակի յՕսմանեան Դրանէ ի հաստատութիւն Կաթողիկոսութեան նորա, եւ չեթող յիշատակել զանուն նորա ի պատարագի զամս իբրեւ երկու» (տե՛ս Պատմութիւն կաթողիկոսաց Էջմիածնի ի Սիմէօնէ մինչ ցՅովհաննէս Ը., գրեալ ի* Մ ս ե ր ե ա ն ց մ ա գ ի ս տ ր ո ս է Մ ս ե ր ե ա ն ց Զ մ ի ւ ռ ն ա ց ի ո ց, *Մոսկուա, 1876, էջ 7)։*

[80] *Դիւան հայոց պատմութեան, նոր շարք, գիրք առաջին, Ղուկաս Կարնեցի, հատ. Ա. (1780–1785), աշխատասիրութեամբ՝ Վ. Գրիգորեանի, Երեւան, 1984, էջ 111։*